# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Տեքստուրոլդ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 4 | Տեքստուրոլդ ՍՊԸ | Տեքստուրոլդ ՍՊԸ | Կոստյում` ամառային, կինոլոգիական /բաճկոն, տաբատ և կեպի/: Կոստյումը նախատեսված է կինոլոգ հրահանգիչների համար, պետք է ունենա հարմարավետ ձևվածք, չսահմանափակի շարժունակությունը հատուկ գործողությունների ժամանակ: Պետք է պատրաստված լինի 230-240 գրամ/մ2 խտությամբ, հակաստատիկ գործվածքից գույնը` սև : Գույնի կայունությունը լվացման, չոր շփման և քրտնքի նկատմամբ նվազագույնը 4 բալ: Աստառը` մուգ գույնի գործվածքից, ընդ որում աստառի բաղադրությունը` 100 % վիսկոզա: Թիկունքը վերին կտրվածքով, կոկետկայով, Բաճկոնի առջևի մասում պետք է լինեն կրծքամասի և գոտկատեղի ծավալային զույգ գրպաններ, որոնք փակվում են կափույրներով, կոճկվում` մեկական մեծ (24-25մմ տրամագծով) կոճակներով ձախ ծոցագրպանը կոճկվում է կոճակով և կտորե օղակով : Բաճկոնը կոճկվում է մետաղական կամ պոլիմերային շղթայով, կարող է ունենալ վրադիր կափույր, որը պետք է ամրանա (կոճկվի) մետաղյա 5-6 հատ կոճգամներով: Կրծքավանդակի աջ և ձախ կողմերում, թևերի վրա |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ինքնակպչուններով ամրացող տարբերանշաններով: Օձիքը ծալովի: Թևքերի դաստակային մասերը մշակված են զույգ կոճակներով և չափսը կարգավորող, 4սմ լայնքով, 8-10սմ երկարությամբ ժապավեննրով, վրան կոճակի օղակներով: Թևքերի ներքին եզրերը մշակված են 4.8-5.2 սմ լայնությամբ մանժետով, մանժետի հետնամասը մշակված է գաղտնի էլաստիկ ժապավենով: Թևքերի վրա ուսակարից 8.5-9.0 սմ ներքև մշակված են 19-20 սմ երկարության և 13-13.5 սմ լայնության վրադիր երկայնակի գրպաններ, որոնք կոճկվում են դեպի կենտրոնական շղթա ներկարված կանաչ երանգի պլաստմասե գաղտնի կայծակ շղթայով: Ձախ և աջ թևքերի վրա մշակվում է սեպաձև տեսքով 7.0×9.0 սմ չափսի, կանաչ գույնի կպչուն ժապավեններ, որոնց ամրանում են ասեղնագործ խորհրդանշանները՝ ՀՀ ԱԱԾ թևքանշանները: Ասեղնագործ ինքնակպչուններով գրվածքների, ՀՀ ԱԱԾ տարբերանշանների նմուշները , ըստ քանակների կտրամադրվեն ՊՍ-ի կողմից, Կատրողի կողմից ներկայացվող 3 հատ տարբեր չափսերի և հասակների նմուշների հաստատումից հետո՝ հինգօրյա ժամկետում: Տաբատի վրա պետք է լինեն կողքի գրպաններ և առջևի լրացուցիչ ծավալային բեռնատար գրպաններ ազդրերի վրա: Լրացուցիչ գրպանները փակվում են կափույրներով, կոճկվում՝ մեկական մեծ (24-25մմ տրամագծով) կոճակներով: Գոտին՝ 5.3-5.5սմ լայնքով, գոտեմակողների լայնությունը 3.5-4.0 սմ, 6-8 հատ: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Կեպին աստառով է, կազմված է կոշտ 1,8-2,3մմ հաստությամբ և 6,0-7,0սմ լայնքով հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Կողամասը ներսից պարուրված է 2,6-2,8սմ լայնքով նույն քողարկող կտորով, միջնամասը և հատակը մշակվում են սոսնձային կտորից միջադիրով և դեղնականաչավուն գույնի (բաճկոնի մեջ օգտագործված տեսակի) աստառով, բամբակյա /բիազ 120գր/մ2/ կտորով: Հետնամասում, կեպիի չափը փոփոխելու համար մշակված է պաշտպանական կամ դարչնագույն գույնի պլաստմասե չափսի կարգավորիչ: Հովհարը միանում է գլխարկին կտորի կողեզրերով: Կիսալուսնաձև հովհարին միջադրված է պլաստմասե |

| | | | |
|---|---|---|---|
| | | | միջադիր 1,8-2,3մմ հաստությամբ : Ճակատային մասին տեղադրված է 3 սմ լայնությամբ երկտակ կտորից կարված գոտի, միջադիրով, 5մմ զարդակարով: Հատակին տպագրական ներկով դրոշմվում է կեպիի չափսը (54-62 չափսի): Պիտակավորումն ու փաթեթավորումը: Բաճկոնի ձախակողմյան փեշի ներքևի եզրից 5.0-7.0 սմ բարձրության վրա, ներսի կողակարին կամ ծոցագրպանին, տաբատի գոտու ձախ ներսամասին պետք է կարված լինեն պիտակ (կամ պիտակներ): Պիտակի վրա նշված` տեսականու անվանումը, չափսը, արտադրող և/կամ մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, լվացքի և խնամքի վերաբերյալ տեղեկատվություն: Բաճկոնի վերին կոճակից կամ շղթայից պետք է կախված լինի չափս-հասակային ստուգիչ պիտակ, վրան նշված` տեսականու անվանումը, չափսը, արտադրող և/կամ մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը,: Փաթեթավորումը առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Կրծքանշանները առանձին- առանձին փաթեթավորված: Արկղերը պիտակավորված կամ տպագրված 10սմ*15սմ չափսի պիտակներով, որոնց վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 4 | | | |